ՆԱԽԱԳԻԾ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«___» _____ 2017 թ. N _____-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԵՏԱԳԱ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՉ ՊԻՏԱՆԻ ԱՆԱՍՆԱԳԵՐԵԶՄԱՆՈՑՆԵՐԻ ՓԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հետագա շահագործման համար ոչ պիտանի անասնագերեզմանոցների փակման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ *Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ԹԵՐԹ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է՝

Հ/Հ	ՇԱՀԱԳՐԳԻՌ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆԸ	ՂԵԿԱՎԱՐԻ ԱԶԳԱՆՈՒՆԸ	ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	ԹՎԱԳՐՈՒՄԸ
1.	ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ	Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ		
2.	ԼՂՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ	Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ		
3.	ԼՂՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ	Ս. ԹԵՎՈՍՅԱՆ		
4.	ԼՂՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ	Կ. ԱԹԱՅԱՆ		
5.	ԼՂՀ ԿԱ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՎԱՐՉՈՒՅԹՅԱՆ ՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ	Ա. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ		

Առաջարկությունները և առարկությունները՝ _____

_____

_____

_____

_____

_____

_____

Նախագիծը ներկայացնողը՝
ԼՂՀ գյուղատնտեսության նախարար *Ա. Մխոյան*

«____» _____ 2017 թ.

Հավելված
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2017 թվականի _____ ___-ի
N _____ -Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԵՏԱԳԱ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՉ ՊԻՏԱՆԻ ԱՆԱՍՆԱԳԵՐԵԶՄԱՆՈՑՆԵՐԻ ՓԱԿՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կանոնակարգվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում գտնվող և պետական սեփականություն հանդիսացող կամ սեփականատեր չունեցող, հետագա շահագործման համար ոչ պիտանի անասնագերեզմանոցների (այսուհետ՝ անասնագերեզմանոց) փակման նպատակով իրականացվող միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) հետ կապված հարաբերությունները:

2. Միջոցառման նպատակներն են՝

1) անասնագերեզմանոցի տարածքում կենսաբանական թափոնների չթույլատրված թաղման կանխարգելումը և որպես հետևանք մարդկանց և կենդանիների համար ընդհանուր հիվանդություններով վարակման կանխումը.

2) շրջակա միջավայրի պաշտպանությունը աղտոտումներից:

3. Սույն կարգի իմաստով անասնագերեզմանոց են համարվում կենսաբանական թափոնների վերամշակման համար օգտագործվող կենսաջերմային և (կամ) հողային հորերը, մետաղյա տարողությունները, Բեկարի հորերը, որոնց հետագա օգտագործումը այդ նպատակով աննպատակահարմար է՝ սանիտարապաշտպանիչ գոտու խախտման, կենսաջերմային հորի շահագործման կանոնների խախտման հանգամանքներից ելնելով:

II. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն) համակարգում և վերահսկողություն է իրականացնում միջոցառման իրականացման գործընթացի նկատմամբ:

5. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անասնաբուժական սպասարկման կայանները (այսուհետ՝ կայաններ)՝ նախարարության կողմից սահմանած ժամկետում նախարարություն են ներկայացնում տեղեկություններ՝ նշելով համայնքը, այն տեղամասը, որտեղ գտնվում է անասնագերեզմանոցը, հնարավորության դեպքում այն իրավաբանական կամ ֆիզիկական անձանց տվյալները (իրավաբանական անձի դեպքում անվանումը, ֆիզիկական անձի դեպքում անունը, ազգանունը, հայրանունը, անձնագրային տվյալները) որոնց սեփականության կամ այլ իրավունքով պատկանող հողատարածքի վրա է տեղակայված անասնագերեզմանոցը:

6. Միջոցառումը ներառում է երեք փուլեր՝

առաջին փուլ՝ անասնագերեզմանոցի գրանցումը և հողատարածքի, որի վրա գտնվում է անասնագերեզմանոցը, սեփականտիրոջ կամ տիրապետողի կամ օգտագործողի պարզումը,

երկրորդ փուլ՝ անասնագերեզմանոցի անասնաբուժասանիտարական հետազոտությունը, սիբիրախտի հարուցչի առկայությունը պարզելու նպատակով հողի և անասնագերեզմանոցի նստվածքի լաբորատոր փորձաքննությունը,

երրորդ փուլ՝ անասնագերեզմանոցի փակումը:

III. ԱՆԱՍՆԱԳԵՐԵԶՄԱՆՈՑԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ԵՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ, ՈՐԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՒՄ Է ԱՆԱՍՆԱԳԵՐԵԶՄԱՆՈՑԸ, ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ ԿԱՄ ՕԳՏԱԳՈՐԾՈՂԻ ՊԱՐԶՈՒՄԸ

7. Անասնագերեզմանոցի գրանցումն և հաստատումն իրականացվում է նախարարության կողմից՝ կայանների ներկայացրած համապատասխան տեղեկությունների հիման վրա:

8. Նախարարությունը հողի կատեգորիայի և դրա նկատմամբ իրավունքների պարզման նպատակով հարցում է կատարում տեղական ինքնակառավարման մարմիններին, միջոցներ է ձեռնարկում հողատարածքի սեփականատիրոջը կամ տիրապետողին կամ օգտագործողին պարզելու ուղղությամբ:

9. Նախարարությունը կազմում և հաստատում է անասնագերեզմանոցի փակման համար անհրաժեշտ աշխատանքների ծավալները և դրանց իրականացման գրաֆիկը:

IV. ԱՆԱՍՆԱԳԵՐԵԶՄԱՆՈՑԻ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ, ՍԻԲԻՐԱԽՏԻ ՀԱՐՈՒՑՉԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐԶԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԻ ԵՎ ԱՆԱՍՆԱԳԵՐԵԶՄԱՆՈՑԻ ՆՍՏՎԱԾՔԻ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

10. Անասնագերեզմանոցը ենթարկվում է անասնաբուժասանիտարական հետազոտության, սիբիրախտի հարուցչի առկայությունը պարզելու նպատակով հողի և անասնագերեզմանոցի նստվածքի լաբորատոր փորձաքննության՝ դրանց անասնաբուժասանիտարական վտանգավորությունը (անվտանգությունը) պարզելու համար:

11. Անասնագերեզմանոցի անասնաբուժասանիտարական հետազոտությունը, սիբիրախտի հարուցչի առկայությունը պարզելու նպատակով հողի և անասնագերեզմանոցի նստվածքի լաբորատոր փորձաքննությունն իրականացվում է կայանների տնօրենների հրամաններով ստեղված հանձնաժողովների կողմից՝ նախարարության հետ նախնական համաձայնեցումից հետո:

12. Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են՝

1) մեկ ներկայացուցիչ նախարարության անասնաբուժության գծով ստորաբաժանումից.

2) այն կայանի ներկայացուցիչները, որի գործունեության տարածքում գտնվում է փակման ենթակա անասնագերեզմանոցը.

3) այն համայնքի ներկայացուցիչը, որի տարածքում գտնվում է փակման ենթակա անասնագերեզմանոցը.

4) այն անձը կամ տնտեսավարող սուբյեկտը, որին սեփականության կամ այլ իրավունքով պատկանում է այն հողատարածքը, որի վրա գտնվում է փակման ենթակա անասնագերեզմանոցը:

13. Անասնագերեզմանոցի անասնաբուժասանիտարական հետազոտության արդյունքների հիման վրա կազմվում է հետագա շահագործման համար ոչ պիտանի անասնագերեզմանոցի անասնաբուժասանիտարական հետազոտության ակտ՝ համաձայն N 1 ձևի:

14. Սիբիրախտի հարուցչի առկայությունը պարզելու նպատակով հողի և անասնագերեզմանոցի նստվածքի լաբորատոր փորձաքննությունն իրականացվում է անասնաբուժության ոլորտում պետական հավատարմագրված լաբորատորիայի կողմից՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան: Հողում և անասնագերեզմանոցի նստվածքում սիբիրախտի հարուցչի առկայության դեպքում համաճարակաբանական մատյանում կատարվում է համապատասխան նշում:

V. ԱՆԱՍՆԱԳԵՐԵԶՄԱՆՈՑԻ ՓԱԿՈՒՄԸ

15. Անասնագերեզմանոցի փակման հետ կապված միջոցառումներն իրականացվում են նախարարության կողմից պետական բյուջեի միջոցների հաշվին՝ «Գնումների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Անասնագերեզմանոցներով զբաղված հողատարածքներում հողաշինարարություն չի իրականացվում:

16. Անասնագերեզմանոցի փակումն իրականացվում է՝

1) անասնաբուժական հսկողության ենթակա օբյեկտների ախտահանման և վարակազերծման կանոններին համապատասխան անասնագերեզմանոցի ախտահանման միջոցով.

2) մակերեսային կառույցների ապամոնտաժման միջոցով՝ դրանց առկայության դեպքում.

3) կենսաջերմային և հողային հորերը, մետաղյա տարողությունները, բլուրները և խրամատները հողով ծածկելու միջոցով.

4) օբյեկտի ողջ մակերեսի երկայնքով կենտրոնում երկու մետրից ոչ պակաս բարձրությամբ հողային բլուրի բարձրացման և այդ բլուրի վրա «Փակ անասնագերեզմանոց» մետաղյա ցուցանակի տեղադրման միջոցով.

5) փորձաքննության ենթարկված հողում և նստվածքում սիբիրախտի հարուցչի առկայության, ինչպես նաև վերոնշյալ բոլոր դեպքերում սիբիրախտով հիվանդ կենդանիների թաղման դեպքում օբյեկտի ողջ մակերեսի երկայնքով եզրերում 0,4 մետր, իսկ կենտրոնում 0,8 մետր բարձրությամբ բետոնե գմբեթի հիմնման և «Սիբիրախտ» մետաղյա ցուցանակի տեղադրման միջոցով:

17. Անասնագերեզմանոցի փակումն իրականացվում է շրջակա միջավայրի պահպանության ոլորտի լիազոր մարմնի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության, դրական եզրակացությունը ստանալուց հետո:

18. Անասնագերեզմանոցի փակման կապակցությամբ կատարվող աշխատանքների ավարտից հետո նախարարության և կազմակերպության կողմից կազմվում է հետագա շահագործման համար ոչ պիտանի անասնագերեզմանոցի փակման ակտը՝ համաձայն N 2 ձևի, և համապատասխան նշում է կատարվում համաճարակաբանական մատյանում:

Անասնագերեզմանոցի փակման մասին տեղեկությունները հինգ աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում են այն համայնքին, որի տարածքում գտնվում է անասնագերեզմանոցը, և հողամասի սեփականտիրոջը (ընդհանուր համատեղ սեփականատիրոջը):

19. Կայանները ոչ պակաս, քան տարին երկու անգամ իրականացնում են փակված անասնագերեզմանոցի անասնաբուժասանիտարական վիճակի հետազոտություն, ինչի մասին համապատասխան նշում է կատարվում համաճարակաբանական մատյանում:

VI. ԱՆԱՍՆԱԳԵՐԵԶՄԱՆՈՑԻ ԼԻԿՎԻԴԱՑՈՒՄԸ

20. Փակ անասնագերեզմանոցները, որոնցում վերջին թաղման ժամկետը կենսաջերմային հորի դեպքում ոչ պակաս քան երկու տարի է, իսկ հողային հորի դեպքում՝ ոչ պակաս, քան 25 տարի, ենթակա են լիկվիդացման: Անասնագերեզմանոցները, որոնցում թաղվել կամ այրվել են սիբիրախտի հետևանքով անկած կենդանիները, թաղման վաղեմության ժամկետից անկախ լիկվիդացման ենթակա չեն:

21. Բոլոր լիկվիդացված անասնագերեզմանոցները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի հրամանի հիման վրա հանվում են անասնաբուժական հաշվառումից, ինչի մասին նշում է կատարվում համապատասխան անասնագերեզմանոցի համաճարակաբանական մատյանում: Լիկվիդացված անասնագերեզմանոցի անասնաբուժական հաշվառումից հանման մասին տեղեկությունները անասնաբուժական հաշվառումից հանելուց երկշաբաթյա ժամկետում ուղարկվում են նախարարություն, այն համայնքին, որի տարածքում գտնվում է անասնագերեզմանոցը, բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովումն և շրջակա միջավայրի պահպանությունն իրականացնող լիազոր պետական մարմիններին:

22. Լիկվիդացված անասնագերեզմանոցի տարածքի հետագա օգտագործումն իրականացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

Ձև 1

ԱԿՏ

Հետագա շահագործման համար ոչ պիտանի անասնագերեզմանոցի անասնաբուժասանիտարական հետազոտության

«____»_____ 20__թ.

Հետազոտության անցկացման վայրը _____

_____

(շրջանի և (կամ) համայնքի անվանումը)

Հանձնաժողովի կազմը

1. _____

(ազգանուն, անուն, հայրանուն, պաշտոնը)

2. _____

(ազգանուն, անուն, հայրանուն, պաշտոնը)

3. _____

(ազգանուն, անուն, հայրանուն, պաշտոնը)

4. _____

(ազգանուն, անուն, հայրանուն, պաշտոնը)

5. _____

(ազգանուն, անուն, հայրանուն, պաշտոնը)

_____ կանոններին (այսուհետ՝ Կանոններ) համապատասխան իրականացրել ենք _____-ից _____ ուղղությամբ

(բնակավայր)

_____ կիլոմետր հեռավորության վրա գտնվող անասնագերեզմանոցի անասնաբուժասանիտարական հետազոտությունը, համաճարակաբանական մատյանի համարը _____:

Հողատարածքի կադաստրային համարը (առկայության դեպքում)_____: հողատարածքի մակերեսը _____ քառակուսի մետր, ինչը հաստատվում է ցանկապատով, խրամատով, աշխարհագրական կոորդինատներով (անհրաժեշտն ընդգծել):

Այլ կողմնորոշիչներ (եթե առկա են) _____

_____

Ցանկապատման տեսքը _____

_____

(նշել ցանկապատման տեսակը և նյութը, որից պատրաստված է, դարպասների առկայությունը)

Խրամատի չափսերը՝ երկարությունը _____ մետր, լայնությունը _____ մետր, խորությունը _____ մետր:

Հանված հողում սիբիրախտի հարուցիչի առկայությունը. առկա է, առկա չէ

(անհարժեշտն ընդգծել)

Քայլուղու առկայությունը առկա է, առկա չէ

(անհարժեշտն ընդգծել)

Անասնագերեզմանոցում կենսաբանական թափոնների ոչնչացումն իրականացվել է այրման, հողային հորում թաղման, կենսաբանական խցում թաղման միջոցով (անհարժեշտն ընդգծել):

Կենսաբանական խուցն իրենից ներկայացնում է մետաղյա տարողություն, փայտաշեն տնակ, աղյուսից (բետոնե) փոս (անհարժեշտն ընդգծել):
Կենսաբանական խուցի չափերը, երկարություն_____ մետր, լայնություն_____մետր, խորություն _____ մետր, ծավալը (մետաղյա տարողության համար) _____ խորանարդ մետր:

Կափույր _____
(նշել առկայությունը (տրամագիծը և բարձրությունը))

Հովանոցի առկայությունը _____
(նշել առկայությունը (երկարությունը, լայնությունը, բարձրությունը))

Դիահերձարանի առկայությունը առկա է, առկա չէ
(անհարժեշտն ընդգծել)

Կենսաբանական թափոնների առաջին թաղումն իրականացվել է _____ թվականին:

Կենսաբանական թափոնների վերջին թաղումն իրականացվել է _____ թվականին:

Նշված հարուցիչներով վարակված կամ ախտոտված կենսաբանական թափոնների առկայությունը եղել են, չեն եղել
(անհարժեշտն ընդգծել)

ինչը հաստատվում է _____
(անասնաբուժական սպասարկման կայանի անվանումը)

_____ տեղեկությամբ:
(տեղեկության աղբյուրը)

Հողի և անասնագերեզմանոցի նստվածքում սիբիրախտի առկայության նմուշները վերցրված են և լաբորատոր փորձաքննության համար ուղարկված _____
_____
(թույլտվություն ունեցող կազմակերպության անվանումը)

Հանձնաժողովի անդամներ

_____	_____
(Ա.Ա.Հ.)	(ստորագրություն)
_____	_____
(Ա.Ա.Հ.)	(ստորագրություն)
_____	_____
(Ա.Ա.Հ.)	(ստորագրություն)
_____	_____
(Ա.Ա.Հ.)	(ստորագրություն)
_____	_____

(Ա.Ա.Հ.) (ստորագրություն)

Ձև 2

ԱԿՏ

Հետագա շահագործման համար ոչ պիտանի անասնագերեզմանոցի փակման

«____»_____ 20__ թ.

Մենք՝ ներքոստորագրողներս, _____

_____

_____

(Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության, անասնաբուժական սպասարկման կայանի, տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացուցիչների ԱԱՀ, պաշտոնները)

հետագա շահագործման համար ոչ պիտանի անասնագերեզմանոցների փակման կանոններին համապատասխան և պետության կարիքների համար աշխատանքների իրականացման առ _____ N _____ պայմանագրի հիման վրա, իրականացրել ենք _____-ից _____ ուղղությամբ
(բնակավայր)
_____ կիլոմետր հեռավորության վրա գտնվող _____ կադաստրային համարով (առկայության դեպքում) հողատարածքում տեղակայված _____ համաճարակաբանական մատյանի համարով անասնագերեզմանոցի զննումը, հողում և անասնագերեզմանոցի նստվածքում սիբիրախտի առկայության պարզման նպատակով նմուշները լաբորատոր փորձաքննության են ենթարկվել _____ կողմից:
(կազմակերպության անվանումը)

Հետազոտության արդյունքները հաստատվել են _____ կայանի տնօրենի կողմից 20__ թվականի _____ ___-ի N _____ հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից:

Անասնագերեզմանոցի փակումն իրականացվել է՝

Հ/Հ	*Աշխատանքի անվանումը*	*Չափման միավորը*	*Քանակը*

_____	_____	_____
(պաշտոնը)	(ստորագրություն)	(Ա.Հ.ազգանուն)
_____	_____	_____
(պաշտոնը)	(ստորագրություն)	(Ա.Հ.ազգանուն)
_____	_____	_____
(պաշտոնը)	(ստորագրություն)	(Ա.Հ.ազգանուն)

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ՆԱԽԱՐԱՐ *Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆ*

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԵՏԱԳԱ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՉ ՊԻՏԱՆԻ ԱՆԱՍՆԱԳԵՐԵԶՄԱՆՈՑՆԵՐԻ ՓԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

Անհրաժեշտությունը

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հետագա շահագործման համար ոչ պիտանի անասնագերեզմանոցների փակման կարգը սահմանելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ներկայացումը պայմանավորված է տասնամյակներ առաջ կառուցված և հետագա շահագործման համար ոչ պիտանի անասնագերեզմանոցների փակումը կազմակերպելու և անվտանգ դարձնելու անհրաժեշտությամբ:

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Երկրում գտնվող անասնագերեզմանոցները կառուցվել են տասնամյակներ առաջ, որոնք լցվելով և հետագա շահագործման համար ոչ պիտանի դառնալով ներկայումս մեծ վտանգ են ներկայացնում կենդանական, բուսական աշխարհի և շրջակա միջավայրի համար, և սույն նախագծի խնդիրն է տվյալ անասնագերեզմանոցների փակումը կազմակերպելու և անվտանգ դարձնելու:

Նպատակը և բնույթը

Սույն նախագծի նպատակն է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գտնվող և հետագա շահագործման համար ոչ պիտանի անասնագերեզմանոցների փակման կարգի սահմանումը:

Ակնկալվող արդյունքը

Սույն նախագծի ընդունման արդյունքում էլ ավելի կկատարելագործվի անասնաբուժության ոլորտի իրավական դաշտը, և կսահմանվի Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հետագա շահագործման համար ոչ պիտանի անասնագերեզմանոցների անվտանգ փակման և լիկվիդացման կարգը:

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված անձինք

Նախագիծը մշակվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի անասնաբուծության և անասնաբուժության վարչության և իրավաբանական բաժնի կողմից:

Այլ տեղեկություններ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հետագա շահագործման համար ոչ պիտանի անասնագերեզմանոցների փակման կարգը սահմանելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը սահմանված կարգով դրվել է հանրային քննարկման Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության պաշտոնական կայքէջում: Սահմանված ժամկետներում առաջարկություններ կամ դիտողություններ չեն ստացվել:

ԼՂՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ *Ա.ՄԽՈՅԱՆ*

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԵՏԱԳԱ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՉ ՊԻՏԱՆԻ ԱՆԱՍՆԱԳԵՐԵԶՄԱՆՈՑՆԵՐԻ ՓԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հետագա շահագործման համար ոչ պիտանի անասնագերեզմանոցների փակման կարգը սահմանելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների ավելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում: Նախագծի ծախսերը նախատեսված են 2016 թվականի պետական բյուջեով:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԵՏԱԳԱ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՉ ՊԻՏԱՆԻ ԱՆԱՍՆԱԳԵՐԵԶՄԱՆՈՑՆԵՐԻ ՓԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հետագա շահագործման համար ոչ պիտանի անասնագերեզմանոցների փակման կարգը սահմանելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջացնում:

ԼՂՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ *Ա.ՄԽՈՅԱՆ*

ԻՐԱՎԱԿԱՆ-ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԵՏԱԳԱ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՉ ՊԻՏԱՆԻ ԱՆԱՍՆԱԳԵՐԵԶՄԱՆՈՑՆԵՐԻ ՓԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հետագա շահագործման համար ոչ պիտանի անասնագերեզմանոցների փակման կարգը սահմանելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չկան:

ԼՂՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ Հ. ՀԱԿՈԲՅԱՆ

ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԼՂՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՔՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Որոշման նախագծի անվանումը՝

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հետագա շահագործման համար ոչ պիտանի անասնագերեզմանոցների փակման կարգը սահմանելու մասին»

Նախագիծը ներկայացնողը՝

ԼՂՀ գյուղատնտեսության նախարարություն

ԼՂՀ կառավարության և ԼՂՀ վարչապետի որոշումներն ուղարկել՝

1. ԼՂՀ գյուղատնտեսության նախարարություն
2. ԼՂՀ առողջապահության նախարարություն
3. ԼՂՀ արդարադատության նախարարություն
4. ԼՂՀ ֆինանսների նախարարություն
5. ԼՂՀ էկոնոմիկայի նախարարություն
6. ԼՂՀ ԿԱ շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչություն

Նախագիծը պատրաստողը՝

ԼՂՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի անասնաբուծության և անասնաբուժության վարչություն

_____ *Ն.*

Մուսայելյան (ստորագրությունը)

«_____» _____ 2017 թ.